2026 թվականին սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում նախատեսվող ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծովինար բնակավայրի ( 3 թղմ 17 փ 185 մետր, 3 թղմ 18 փ 340 մետր, 5 թղմ 8 փ 275 մետր, 5 թղմ 9 փ 230 մետր, 5 թղմ 10 փ 150 մետր, 3 թղմ հրապարակ 130 մետր, 4 թղմ 4 փ 350 մետր, 1 թղմ 2 փ 350 մետր, 1 թղմ 1փ 210 մետր, 5 թղմ 12 փ 250 մետր, 5 թղմ 26փ 310 մետր, 5 թղմ 18 փ 670 մետր) ընդամենը 3450 մետր երկարությամբ գյուղամիջյան փողոցների լուսավորության ցանցի կառուցում:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Կիրարկման ոլորտ

ՀՀ Գեղարքունիքի Մարտունի համայնքի Ծովինար բնակավայրի լուսավորության համակարգի բարելավման աշխատանքների կատարման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի պատվիրման, ծախսերի գնահատման և տեխնիկական բնութագրի կազմման համար: Այն նպատակ ունի տրամադրվող սուբվենցիայի ծրագրի իրականացման շնորհիվ բարելավել բնակչության սոցիալ-տնտեսական վիճակը,որով կփոխվի և բնակիչների ապրելակերպը, կբարելավվի սանիտարական պատշաճ պայմանների ապահովումը; Ծրագրի իրականացման շնորհիվ կփոխվի բնակչության կյանքի որակը;

ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Փողոցային լուսավորության համակարգի կառուցման հիմնախնդիրը բնակավայրում առկա է վաղուց; Բնակչության համար առաջնահերթ խնդիրներից են փողոցների գիշերային լուսավորության ապահովումը; Լուսավորության կառուցման համար նախատեսված փողոցները երբևէ լուսավորություն չեն ունեցել: Նախատեսվող փողոցները կտրտված ռելիեֆ ունեն: Նորմալ փողոցային լուսավորության ապահովումը բնակչության համար շատ կարևոր և հրատապ խնդիր է, կենսական նշանակություն ունեցող: Հիմնախնդրի լուծմամբ կապահովվի գյուղի տարբեր հատվածների համաչափ սոցիալ-տնտեսական զարգացումը; Բնակավայրի լուսավորության ցանցի կառուցման շահառուներ են համարվում գյուղի ավելի քան 850 տնտեսություններ;

ԿԱՏԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Աշխատանքների իրականացման համար պետք է կատարել`

3450 (երկլար) մետր նորմաներին համապատասխան հոսանքալարերի ձեռք բերում և անցկացում

Ծրագրի ընդհանուր գումարը մոտավորապես կարող է կազմել 25,0 մլն դրամ:

ԾՈՎԻՆԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉ, ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ